ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող «Տարվա լավագույնները» 2022

մրցույթի նրկայացվող ծրագրի սեղմագիր

Ծրագրի անվանումը	«Հային հայ պահող լեզուն ու մշակույթը Սփյուռքում»
Անվանակարգը	Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագրի կամ նախաձեռնության համար
Ծրագրի ընդհանուր նկարագիր	<<Մենք հաջորդ սերունդներին փոխանցում ենք ոչ թե արյուն, այլ գաղափարներ, և գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է հաջորդին սովորեցնել հայոց լեզու>>: Այս պատգամը մենք ստացել ենք մեծանուն գրող Վիլիամ Սարոյանից, ով շատ լավ գիտակցել է մայրենի լեզվի և հայոց մշակույթի կարևորությունը հայրենի սահմաններից դուրս: Այսօր Սփյուռքում լուրջ խնդիր ունենք: Օտար ափերում բնակվող հայ և խառնածին ամուսնություններից ծնված ընտանիքներում հաղորդակցվում են օտար լեզվով: Այսպես կորցնում ենք մեր ազգային դիմագիծը, ինքնության ամենակարևոր երաշխիքներից մեկը՝ լեզուն, մշակույթն ու արվեստը: Հաշվի առնելով այս ամենը՝ որոշեցինք համատեղ գործունեություն ծավալել և Սփյուռքի հայկական գաղթօջախներում գտնվող հայ երեխաներին սովորեցնել մեր ոսկեղենիկ հայոց լեզուն ու ստեղծագործել՝ ծանթանալով հայկական կերպարվեստին և հայ վարպետների հրաշք գոհարներին: Ծրագրի կարևորությունը նրանում է, որ մենք նախատեսել ենք օտար երկրներում ապրող հայ և խառնածին ամուսնություններից ծնված երեխաներին հայ պահել, սիրել տալ մեր հայրենիքը, մշակույթը, կերպարվեստն ու հայոց լեզուն: Ստեղծել ենք հեռավար դասերի այնպիսի մոդել, որ երեխան հանգստյան օրերին ունենալով երկու ԶՈՒՄ հանդիպում չձանձրանա և սիրով սովորի:

Ծրագրի նպատակ և խնդիրներ	1. Ստեղծել նպաստավոր պայմաններ ոչ հայկական միջավայրում ապրող հայ երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպման համար 2. Ծրագիրը հասանելի դարձնել Սփյուռքում ապրող հայ երեխաների համար 3. Նպաստել այլալեզու հայերի շրջանում հայկական ազգային ինքնության հաստատմանն ու արմատավորմանը, նրանց հայադարձությանը 4. Մասնակցել ազգի, մայրենիի հարատևմանը, սերունդների հայեցի կրթությանն ու դաստիարակությանը և լեզվամշակութային ուծացմանը դիմակայելու գործին 5. Խթանել Սփյուռքում կրթական և մշակութային զարգացմանն ու աշխուժացմանը, մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանը, հայ փոքրիկների շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելուն և ինքնուրույն գեղավեստական գործունեություն ծավալելուն

Ակնկալվող արդյունքներ	Օգնել Սփյուռքում ապրող մեծ թվով երեխաների խոսել մայրենի լեզվով, արտահայտել սեփական մտքերը հայերեն, ծանոթացնել հայկական կերպարվեստին՝ զարգացնելով վերլուծական-ստեղծագործական մտածողությունը: Հայաստանի համն ու հոտը ներկայացնել հայրենիքից հեռու գտնվող ընտանիքներին, որպեսզի մեր ազգն ու մայրենին հարատևի, սերունդները կրթվեն ու դաստիարակվեն հայեցի, պահպանեն հայկական ինքնությունը: Օգտագործելով բոլոր հնարավոր հարթակները ծրագիրը հասանելի դարձնել սփյուռքահայ երեխաներին:

Ծրագրի իրականացման պլան	Մենք ծրագրի իրականացման համար նախատեսել ենք Zoom հարթակը: Շաբաթ և կիրակի օրերին յուրաքանչյուր առարկայի համար ունեցել ենք մեկ Zoom հանդիպում: Օգտագործել ենք հարթակի բոլոր հնարավորությունները՝ էլեկտրոնային գրատախտակ, էջի կիսում, տեսահոլովակների ցուցադրում: Օգտվել ենք ԴՇՀ-ի դպրոցական դասագրքերի գրադարանից, հայկական Վիքիպեդիայի արվեստ և կերպարվեստ բաժնի մեր կողմից ստեղծած հոդվածներից, մայրենիի թեմատիկ պլանների (մեր կողմից կազմած) միջին մակարդակի առաջադրանքներից https://docs.google.com/document/d/1ceKWxBTB3Ks0MrWRTfoczLIQHm_NLuhS/mobilebasic , կերպարվեստի համար նախատեսված թեմատիկ պլաններից (մեր կողմից կազմած) https://www.canva.com/design/DAEfONPKV78/view?utm_content=DAEfONPKV78&utm_campaign=designshare&utm_medium=link&utm_source=publishsharelink : Փորձնական դասի միջոցով ծանոթացել ենք երեխաների հայոց լեզվի և կերպարվեստի տիրապետման գիտելիքներին, կարողություններին և հմտությունների մակարդակին: Ըստ կազմված ծրագրի ուսումնասիրել ենք հայոց այբուբենի տառերը՝ զուգահեռաբար ներկայացրել ենք կերպարվեստի ժանրերը, տեսակները: 2021 թվականի ամռանը, արդեն հայրենիքում, մասնակիցներից մեկը՝ Աննա Ռամենսկայան, ծանոթացրել է Լուսիկ Ագուլեցու գործունեությանը, մասնակցել է թանգարանի կողմից կազմակերպված կրթական ծրագրին, որի ընթացքում ցորենի հասկերից պատրաստել է խաչբուռ, մասնակցել է Ղազարյան նկարչական ստուդիայի կողմից Նարեկացի արվեստի միությունում կազմակերպված ցուցահանդեսին, որտեղ ներկայացրել է մեկ նկար: Մասնակցել է Պատմության թանգարանի կողմից կազմակերպված հայկական տարազների ցուցադրմանը և թանգարանի կրթական ծրագրին, Շարամբեյանի անվան ժող արվեստի թանգարանում ձևավորել է հայկական գորգագործական նախշերի օրինակ փայտի վրա:

Շարունակականության ապահովում	Ուսումնասիրելով հանրակրթական պետական նոր չափորոշիչը՝ նախատեսում ենք հետագա տարիներին ծրագիրը ընդլայնել և էլ ավելի մեծ թվով սփյուռքահայ երեխաների սովորեցնել ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվել գրական հայերենով, կարդալ, հասկանալ, վերարտադրել պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպել տեքստի հիմնական գաղափարը, ճանաչել հայրենիքը, ճանաչել իր ընտանեկան, ազգային և քաղաքացիական պատկանելությունը, ներկայացնել տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին՝ բարձրացնելով սովորողների գեղարվեստական կրթության մակարդակը և նպաստել գեղագիտական, բարոյական դաստիարակության զարգացմանը:
Ծրագրի սահիկաշար *(կցել ակտիվ հղումը)*	https://docs.google.com/presentation/d/1ytGK6L0DfR54S3_T5evr5nBEZs0e5g44/edit?usp=sharing&ouid=109407485658509812142&rtpof=true&sd=true

***Ծանոթություն**

Ծրագրի սեղմագրի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 5 էջը:

Ծրագրի սահիկաշարը հղման տեսքով ներկայացնելը պարտադիր պահանջ է:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում՝ ծրագրի սահիկաշարը ենթակա է հրապարակման: